

## Հաշվետվություն

2023 թվականի օգոստոսի 1-ից 5-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ  
(Նյու Յորք) կատարած գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը.**

Արամ Գուգարաց

**2. Զբաղեցրած պաշտոնը.**

Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները.**

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք, օգոստոսի 1-ից 5-ը

**4. Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման  
փորձագետների կոմիտե (UN-GGIM)

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր  
նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՄԱԿ-ի համաշխարհային երկրատարածական  
տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) 13-րդ  
նստաշրջանին

**6. Քննարկված թեմաները.**

- համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման  
ամրապնդման մեխանիզմներ,
- տարածաշրջանային կոմիտեների ներդրումը երկրատարածական  
տեղեկատվությանն առնչվող համաշխարհային գործունեության  
շրջանակներում,
- թեմատիկ ցանցերի ներդրումը երկրատարածական տեղեկատվությանն  
առնչվող համաշխարհային գործունեության շրջանակներում,
- երկրատարածական տեղեկատվության ապագա էկոհամակարգ,
- երկրատարածական տեղեկատվության համալիր համակարգ (պրակտիկա),
- համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ,
- երկրատարածական տեղեկատվության կիրառումը կայուն զարգացման և  
կլիմայի դիմացկունության ձևավորման համար,
- երկրատարածական տեղեկատվության և վիճակագրական և այլ  
համապատասխան տվյալների ինտեգրում,
- երկրատարածական տեղեկատվության կիրառումը հողօգտագործման և  
հողաշինարարության բնագավառում,
- երկրատարածական տեղեկատվությունը և, ծառայությունները աղետների

- դեմ պայքարելու համար,
- համալիր երկրատարածական տեղեկատվությունը ծովային ռեսուրսների վերաբերյալ,
  - քաղաքական և իրավական շրջանակները՝ ներառյալ վստահելի տվյալներին վերաբերող հարցերը,
  - ստանդարտների ընդունում և իրականացում, երկրատարածական տեղեկատվության հարցերով զբաղվող համաշխարհային համայնքի համար,
  - համագործակցություն ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագետների խմբի հետ,
  - հաշվետվություն ծրագրերի կառավարման վերաբերյալ,
  - 14-րդ նստաշրջանի անցկացման նախնական օրակարգ և ժամկետներ,
  - փորձագետների կոմիտեի հաշվետվությունը 13-րդ նստաշրջանի աշխատանքի վերաբերյալ:

#### **7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Նստաշրջանի հիմնական նպատակն է նպաստել միջկառավարական մեխանիզմի ստեղծմանը՝ համատեղ որոշումների կայացմանը, ինչպես նաև աջակցել ազգային, տարածաշրջանային և գլոբալ քաղաքականության շրջանակներում երկրատարածական տեղեկատվության արտադրությանը, մատչելիության ապահովմանը և կիրառման ուղղությունների սահմանմանը:

Կարևորվել է մասնագիտական հանրության դերը ՄԱԿ-ի համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) հետագա աշխատանքների կազմակերպման գործընթացում, վեր են հանվել երկրատարածական տեղեկատվության օգտագործման վերաբերյալ արդի խնդիրները, անդրադարձ է կատարվել զարգացման օրակարգի ձևավորմանը:

Քննարկվել են աշխատանքային խմբերի կողմից ներկայացված հաշվետվությունները: Մասնավորապես բարձրացվել են զարգացող երկրների կողմից իրականացվող երկրատարածական տվյալների ենթակառուցվածքների ներդրման համար կայուն ֆինանսավորման հարցերը:

#### **8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների կոմիտեի 13-րդ նստաշրջանում որոշվել է ի գիտություն ընդունել աշխատանքային խմբերի կողմից նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները, հաստատվել է հաջորդ 14-րդ նստաշրջանի օրակարգը:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվում է շարունակել նամակագրությունը տարբեր մասնագիտական աշխատանքային խմբերում Հայաստանի անդամակցության հարցի վերաբերյալ:

Աշխատանքային խմբերում ներգրավվածությունը կնպաստի ՀՀ-ում ազգային երկրատարածական տվյալների արդյունավետ կառավարմանը, ՀՀ կառավարության որդեգրած ռազմավարության արդյունավետ իրականացմանը՝ հաշվի առնելով միջազգային փորձը:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը:**

Արամ Գուգարաց



09.08.2023 թ.